# Ա Զ Դ.

Բաժանորդագրութիւն Արարատայ յօրէ հրատարակութեան (1868 մայիս) պարտաւորիչ գոլով բոլոր եկեղեցականաց Հայոց, ոմանք գործակալք ծածկումէին բաժանորդաց անուններն և ոմանք իսկ մինչև տարւոյն վերջը յետաձգում էին բաժանորդաց ցուցակն, որի համար Տպար. ժողովս դիմեց Սինօդին և Թեմական Ատեաններին խնդրել վիճակների համայն եկեղեցականաց և գործակալաց ցուցակներն, նոյնպէս և գործակալներից առանձին առանձին ցուցակներ, զորս ստանալով ուղարկեց Յունուար և փետրուար ամսոց Արարատները իւրաքանչիւր գործակալներին, համաձայն ցուցակի Թեմական Ատեաններին, որոց կուղարկուի ժապաւինեալ ընկալագիր որպէս զի բաժանորդագներն ստանան և ներկայացնեն Թեմական Ատեաններին ընկալագրոց արմատի հետ:

Տպար. ժողովը խնդրում է Արժ. գործակալներից և եկեղեցականներից որ բաժանորդագինն ուղղակի Թեմական Ատեաններին ուղարկեն և ոչ թէ Տպար. ժողովին կամ Սինօդին:

Ռուսաստանից և արտասահմանից բաժանորդագրուելու ցանկացողներ թող բարեհաճեն դիմել Տպար. ժողովին կանխիկ վճարելով բաժանորդագինն: